

**ԵՐԵՎԱՆԻ ՊՈԴՊԱՏՅԱ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ**  
**«ՄԵՏԱԼ ՍՏԻԼ» ՓԲԸ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի  
գործակալության կողմից 18.09.2007թ-ին, գրանցման համար՝ 65.120.00578  
Գտնվելու վայր - ՀՀ, ք. Երևան, Արտաշիսյան 94/16



Բովանդակություն

Դեկլարության հայտարարություն.....	3
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .....	4
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն .....	7
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն .....	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն .....	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն .....	10
Ֆինանսական Հաշվետվություններին Կից Ծանոթագրություններ .....	12
1. Ընդհանուր տեղեկություններ.....	12
2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքերը.....	14
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը.....	18
4. Հիմնական միջոցներ.....	28
5. Ոչ նյութական ակտիվներ.....	28
6. Ներդրումային գույք.....	29
7. Տրված կանխավճարներ.....	29
8. Հետաձգված հարկային ակտիվներ.....	29
9. Ապրանքանյութական պաշարներ.....	30
10. Դեբիտորական, կրեդիտորական պարտքեր և կանխավճարներ.....	30
11. Դրամական միջոցներ .....	31
12. Այլ ակտիվներ.....	31
13. Կանոնադրական կապիտալ .....	31
14. Պահուստային կապիտալ .....	31
15. Զուտ ակտիվներ և կապիտալի այլ տարրեր.....	31
16. Վարկեր և փոխառություններ **/.....	32
17. Պահուստներ.....	34
18. Հասույթ և վաճառքի ինքնարժեք .....	34
19. Այլ եկամուտներ .....	35
20. Իրացման ծախսեր.....	35
21. Վարչական ծախսեր.....	36
22. Այլ ծախսեր.....	36
23. Ֆինանսական ծախսեր .....	36
24. Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում).....	37
25. Հարկեր և այլ պարտադիր վճարներ .....	37
26. Կապակցված կողմերի բացահայտում .....	38
27. Պայմանական պարտավորություններ և այլ.....	38

**Ղեկավարության հայտարարությունը 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման պատասխանատվության վերաբերյալ**

Ղեկավարությունը պատասխանատու է «Երևանի Պողպատյա Խողովակների Գործարան «Մետալ Ստիլ»» ՓԲԸ-ի (այսուհետ նաև Բիզնես) ֆինանսական հաշվետվությունների, որոնք ներառում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը, սեփական կապիտալում փոփոխությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (հետագայում նաև ՖՀՄՄ) համապատասխան պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բիզնեսի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բիզնեսը, ընդհատել նրա գործունեությունը, կամ եթե չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:


- Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝
- հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
  - հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
  - լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՄ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Բիզնեսի ֆինանսական վիճակի, տեղի ունեցած որոշակի գործարքների և իրադարձությունների ազդեցության մասին,
  - Բիզնեսի գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

- Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝
- ✓ Բիզնեսում ներքին վերահսկողության արդյունավետ և ողջամիտ համակարգ մշակելու, ներդնելու և պահպանելու համար,
  - ✓ համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Բիզնեսի գործառնությունները արտացոլելու, ներկայացնելու և ցանկացած ժամանակ Բիզնեսի ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն ղեկավարությանը հավաստիանալու, որ Բիզնեսի ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՄ-ներին,
  - ✓ ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
  - ✓ Բիզնեսի ակտիվների անվտանգության ապահովման ուղղությամբ խելամիտ քայլերի իրականացման համար, և
  - ✓ խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները Բիզնեսի ղեկավարության կողմից հաստատված են 2021թ. հունիսի 18-ին:

Ստորագրված է «Երևանի Պողպատյա Խողովակների Գործարան «Մետալ Ստիլ»» ՓԲԸ-ի ղեկավարության կողմից / անունից:

Տնօրեն  
Ն. Հակոբջանյան



Գլխավոր հաշվապահ  
Գրիգորյան





«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀԶ ՍՊԸ  
ՀՀ, Երևան, Խորենացի 27ա/1  
“London Business Group” JV LLC  
27a Khorenatsi str., apt. 1, Yerevan, RA  
Tel: (+37410) 541272, 560852  
E-mail: audit@lbg.am  
Web: www.lbg.am

## ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևանի Պողոսատյա Խողովակների Գործարան «Մետալ Ստիլ» Փակ  
Բաժնետիրական Ընկերության Դեկլարությանը և Բաժնետերերին

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Երևանի Պողոսատյա Խողովակների Գործարան «Մետալ Ստիլ»» ՓԲԸ-ի (այսուհետ նաև Բիզնես) կից ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բիզնեսի ֆինանսական վիճակը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Բիզնեսից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԵՄԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

### Այլ հանգամանք

«Երևանի Պողոսատյա Խողովակների Գործարան «Մետալ Ստիլ»» ՓԲԸ-ի 2020թ-ի ֆինանսական հաշվետվությունները նախկին հինգ տարիների դադարից հետո առաջինն են, որոնք ենթարկվել են աուդիտի: Սրանից առաջ 2014 թվականի ֆինանսական հաշվետվություններն են ենթարկվել աուդիտի:

### **Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Բիզնեսի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Բիզնեսի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Բիզնեսը լուծարելու կամ Բիզնեսի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Բիզնեսի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

### **Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, քայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, որք այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող են ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

➤ հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- ձեռք ենք բերում ատոլիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան ատոլիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Բիզնեսի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված ատոլիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Բիզնեսի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է ատոլիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված ատոլիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բիզնեսին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք ղեկավարությանը ատոլիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ատոլիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՉ ՍՊԸ

18 հունիսի, 2021 թ.


Ատոլիտի ղեկավար

Գ. Մովսիսյան



Տնօրեն

Տ. Չոբյան




**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>Ակտիվներ</b>			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	1,316,314	447,909
Ոչ նյութական ակտիվներ	5	444	517
Ներդրումային գույք	6	446,222	423,963
Տրված կանխավճարներ	7	585,716	-
Հետաձգված հարկային ակտիվներ	8	1,202	203
<i>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</i>		<u>2,349,898</u>	<u>872,592</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Ապրանքանյութական պաշարներ	9	2,310,735	2,266,823
Դեբիտորական պարտքեր	10	92,626	123,531
Տրված կանխավճարներ	10	243,922	421,364
Դրամական միջոցներ	11	521,796	8,738
Այլ ակտիվներ	12	7,942	11,408
<i>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</i>		<u>3,177,021</u>	<u>2,831,864</u>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>5,526,919</b>	<b>3,704,456</b>
<b>Կապիտալ և պարտավորություններ</b>			
<b>Կապիտալ</b>			
Կանոնադրական կապիտալ	13	1,000,000	865,000
Պահուստային կապիտալ	14	74,500	54,500
Չբաշխված շահույթ	15	474,677	398,909
<b>Ընդամենը կապիտալ</b>	15	<u>1,549,177</u>	<u>1,318,409</u>
<b>Պարտավորություններ</b>			
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	16	669,520	354,094
<i>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</i>		<u>669,520</u>	<u>354,094</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	16	2,856,284	1,396,877
Կրեդիտորական պարտքեր	10	238,477	482,757
Ստացված կանխավճարներ	10	210,661	151,192
Պահուստներ	17	2,800	1,127
<i>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</i>		<u>3,308,222</u>	<u>2,031,953</u>
<b>Ընդամենը պարտավորություններ</b>		<b>3,977,742</b>	<b>2,386,047</b>
<b>Ընդամենը կապիտալ և պարտավորություններ</b>		<b>5,526,919</b>	<b>3,704,456</b>

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Տնօրեն  
Ն. Հակոբջանյան

18 հունիսի, 2021թ.




Գլխավոր հաշվապահ  
Հ. Գրիգորյան



**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն**

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	18	4,560,965	4,344,491
Վաճառքի ինքնարժեք	18	(3,813,611)	(3,882,620)
<b>Համախառն շահույթ</b>		<b>747,354</b>	<b>461,871</b>
Այլ եկամուտներ	19	376,625	121,618
Իրացման ծախսեր	20	(56,445)	(48,015)
Վարչական ծախսեր	21	(132,470)	(92,909)
Այլ ծախսեր	22	(202,521)	(72,896)
<b>Գործառնական գործունեության արդյունք</b>		<b>732,543</b>	<b>369,669</b>
Ֆինանսական եկամուտներ		-	-
Ֆինանսական ծախսեր	23	(205,900)	(153,492)
<b>Ֆինանսական գործունեության արդյունք</b>		<b>(205,900)</b>	<b>(153,492)</b>
<b>Շահույթ / վնաս նախքան հարկումը</b>		<b>526,643</b>	<b>216,177</b>
Շահութահարկ	24	(72,980)	(37,610)
<b>Համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>453,663</b>	<b>178,567</b>

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Տնօրեն  
Ն. Հակոբջանյան



18 հունիսի, 2021թ.



Գլխավոր հաշվապահ  
Հ. Գրիգորյան



**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն**


(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Կանոնադրական կապիտալ	Պահուստային կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
<b>2019թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>865,000</b>	<b>26,500</b>	<b>775,000</b>	<b>1,666,500</b>
Ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	178,567	178,567
Հատկացում պահուստային կապիտալին	-	28,000	(28,000)	-
Հայտարարված շահաբաժիններ	-	-	(526,658)	(526,658)
<b>2019 թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ</b>	<b>865,000</b>	<b>54,500</b>	<b>398,909</b>	<b>1,318,409</b>
<b>2020 թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>865,000</b>	<b>54,500</b>	<b>398,909</b>	<b>1,318,409</b>
Ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	453,663	453,663
Հատկացում պահուստային կապիտալին	-	20,000	(20,000)	-
Կանոնադրական կապիտալի համալրում	135,000	-	-	135,000
Հայտարարված շահաբաժիններ	-	-	(357,895)	(357,895)
<b>2020 թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ</b>	<b>1,000,000</b>	<b>74,500</b>	<b>474,677</b>	<b>1,549,177</b>

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:


Տնօրեն  
Ն. Հակոբջանյան



18 հունիսի, 2021թ.



Գլխավոր հաշվապահ  
Հ. Գրիգորյան



**Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն**

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<b>Դրամական միջոցների սկզբնական մնացորդ</b>	11	8,738	14,516
<b>Գործառնական գործունեություն</b>			
<i>Մուտքեր գործառնական գործունեությունից</i>			
Մուտքեր արտադրանքի, ապրանքների վաճառքից		5,620,055	5,118,774
Մուտքեր մատուցված ծառայություններից		23,936	19,355
Այլ մուտքեր		43,026	22,842
<i>Ընդամենը մուտքեր գործառնական գործունեությունից</i>		<u>5,687,017</u>	<u>5,160,971</u>
<i>Ելքեր գործառնական գործունեությունից</i>			
Գնված ապրանքների ու նյութերի դիմաց		3,296,777	3,265,262
Ձեռքբերված աշխատանքների ու ծառայությունների դիմաց		727,050	671,809
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ		122,006	99,443
Հարկեր և այլ պարտադիր վճարներ		941,250	854,826
Այլ ելքեր		34,148	26,435
<i>Ընդամենը ելքեր գործառնական գործունեությունից</i>		<u>5,121,231</u>	<u>4,917,775</u>
<b>Ջուտ հոսքեր գործառնական գործունեությունից</b>		565,786	243,196
<b>Ներդրումային գործունեություն</b>			
<i>Մուտքեր ներդրումային գործունեությունից</i>			
Հիմնական միջոցների իրացում		1,500	-
Տոկոսների ստացում և այլ մուտքեր		720	-
<i>Ընդամենը մուտքեր ներդրումային գործունեությունից</i>		<u>2,220</u>	<u>-</u>
<i>Ելքեր ներդրումային գործունեությունից</i>			
Հիմնական միջոցների ձեռքբերում		1,092,418	11,067
Փոխառությունների տրամադրում և այլ ելքեր		-	-
<i>Ընդամենը ելքեր ներդրումային գործունեությունից</i>		<u>1,092,418</u>	<u>11,067</u>
<b>Ջուտ հոսքեր ներդրումային գործունեությունից</b>		(1,090,198)	(11,067)



## Ֆինանսական Հաշվետվություններին Կից Ծանոթագրություններ

### 1. Ընդհանուր տեղեկություններ

#### 1.1 Իրավական կարգավիճակը

«Մետալ Ստիլ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև Բիզնես) գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալության կողմից 18.09.2007թ-ին՝ 65.120.00578 գրանցման համարով (վկայական համար 03Ա076109): 09.12.2014թ-ին վերանվանվել է որպես «Երևանի Պողպատյա Խողովակների Գործարան «Մետալ Ստիլ»» փակ բաժնետիրական ընկերություն: Կանոնադրության վերջին փոփոխությունը գրանցված է 19.10.2020թ-ին, կատարվել է կոնանադրական կապիտալի ավելացումը:

Բիզնեսի գործունեության և իրավաբանական հասցեն.

Բիզնեսի փաստացի և իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Արտաշիսյան 94/16:

Բիզնեսի կանոնադրական կապիտալը և մասնակիցները.

Ընկերության կանոնադրական կապիտալը 31.12.2020թ-ի դրությամբ կազմել է 1,000,000 հազ. ՀՀ դրամ, որը կազմված է 10 հազ. ՀՀ դրամ անվանական արժեքով 100,000 հատ բաժնետոմսերից: 31.12.2020թ-ի դրությամբ Բիզնեսի բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված ու վճարված են: Դրանք պատկանում են Բիզնեսի միակ բաժնետեր Դավիթ Հակոբջանյանին:

Բիզնեսի գործունեության առարկան.

Բիզնեսը զբաղվում է մետաղական խողովակների, պրոֆիլների և մետաղական ծունկերի արտադրությամբ, մանրամեծածախ վաճառքով (այդ թվում արտահանման միջոցով), համանման ապրանքատեսակների առևտրով: Միաժամանակ Բիզնեսը ունի սեփականության իրավունքով անշարժ գույք և այլ ակտիվներ, որոնք տրամադրում է գործառնական վարձակալությամբ:

Բիզնեսի տնօրենը.

«Մետալ Ստիլ» փակ բաժնետիրական ընկերություն տնօրենն է Նորիկ Ռաֆիկի Հակոբջանյանը: Նա գործադիր մարմնի ղեկավար է հանդիսանում Բիզնեսի բացման օրվանից:

#### 1.2 Արտաքին միջավայրը և Բիզնեսի գործունեությունը

Բիզնեսը իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում և նրա գործունեության վրա ուղղակի ազդեցություն ունեն Հայաստանի տնտեսական վիճակը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, կարող է լրացուցիչ բարդություններ ստեղծել Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Ինչպես դիտվել է նախկինում, փաստացի կամ թվացյալ ֆինանսական խնդիրները կամ ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը հաճախ բացասական ազդեցություն են ունենում Հայաստանի ներդրումային միջավայրի և նրա տնտեսության ընդհանուր վիճակի վրա: Բիզնեսի ակտիվների վրա բացասական ազդեցություն կարող են ունենալ ընդհանուր տնտեսական վիճակը, արժեթղթերի շուկայի ձևավորված չլինելը, օրենսդրական և աշխարհաքաղաքական փոփոխությունները, որոնք բոլորն էլ ունեն ակտիվների գնահատման, տոկոսադրույքների, ներդրողների ընդհանուր տրամադրվածության և որոշումների կայացման վրա ուղղակի ազդեցություն: Այս ամենը դուրս է Բիզնեսի վերահսկողությունից:

Երկրի ապագա տնտեսական զարգացման հիմնական ուղղության վրա իրավական, կանոնակարգման և քաղաքական զարգացման հետ միասին զգալիորեն ազդում են կառավարության կողմից ընդունված հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները: Դեկավարությունը հնարավորություն չունի կանխատեսել բոլոր ապագա զարգացումները, որոնք կարող են ազդեցություն ունենալ տնտեսության վրա: Հետևաբար չի կարող կանխատեսել նաև դրանց հետևանքային ազդեցությունը Բիզնեսի գուտ ակտիվների արժեքի փոփոխության վրա: Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են ընթացիկ գործառնական և բիզնես միջավայրի ազդեցությունը Բիզնեսի գործունեության և ֆինանսական արդյունքների վրա: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել դեկավարության գնահատումներից:

Տես նաև ծանոթագրություն 27:

## 2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքերը

### 2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (այսուհետ՝ ՀՀՍՄԽ) և Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՍՍ) համաձայն:

Բիզնեսի ֆինանսական հաշվետվությունները ՖՀՍՍ-ի համաձայն ներկայացնելու նպատակով ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացվել են լրացուցիչ բացահայտումներ:

### 2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում, և որ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում գործունեությունը դադարեցնելու կամ էական կրճատելու մտադրություն կամ անհրաժեշտություն չկա: Հաշվետվությունների պատրաստման համար կիրառվել է սկզբնական արժեքի սկզբունքը, բացառությամբ այն դեպքերի, որոնց մասին նշված է հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

Ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է Բիզնեսի՝ 2020 թ-ի դեկտեմբերի 31-ի և 2019 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ (համեմատական ամենավաղ տեղեկատվություն) ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս:

Բիզնեսը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ՖՀՍՍ-ի համաձայն պատրաստելիս կիրառել է հետևյալ մոտեցումները.

- ✓ չի ճանաչել հոդվածները որպես ակտիվ կամ պարտավորություն, եթե ՖՀՍՍ-ով թույլ չի տրվում այդպիսի ճանաչում,
- ✓ ճանաչել է այն ակտիվներն ու պարտավորությունները, որոնց ճանաչումը պահանջվում է ՖՀՍՍ-ով,
- ✓ ՖՀՍՍ-ն կիրառվել է բոլոր ճանաչված ակտիվները և պարտավորությունները չափելիս:

### 2.3 Ղեկավարության գնահատումներ և դատողություններ

ՖՀՍՍ-ների և ՀՀ հաշվապահական հաշվառման օրենսդրության պահանջով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում Բիզնեսի ղեկավարությունը կատարում է գնահատումներ, կանխատեսումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Այդ դատողությունները կիրառվում են ֆինանսական հաշվետվությունների ակտիվների ու պարտավորությունների չափման ժամանակ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից:

Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

#### Գնահատումներ և ենթադրություններ՝ իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով, կամ բացահայտել դրանց իրական արժեքը ֆինանսական հաշվետվություններում:

Բիզնեսի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի:

1. Նույնական ակտիվի կամ պարտավորության համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված);
2. Ուղղակի կամ անուղղակի դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1. կետում ներառվող գնանշվող գներից;
3. Ոչ դիտելի ելակետային տվյալներ՝ շուկայական տվյալների վրա չհիմնված:

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը հիմնվում է ամենացածր արժեքի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման գործում: Հաշվապահական գնահատումների արդյունքները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք տեղի են ունենում:

#### 2.4 Գործառնական և հաշվետվությունների ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետությունում գործառնական արժույթը ՀՀ դրամն է, որն էլ հանդիսանում է Բիզնեսի գործառնական արժույթը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով: Դեկլարության համոզմամբ՝ այն լավագույնս է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձություններն ու գործարքների տնտեսական էությունը և ամենահարմարն է Բիզնեսի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար:

ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

#### 2.5 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում

Բիզնեսը որոշել է պատրաստել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն՝ ենթագումարներով երկու առանձին հաշվետվությունների (ֆինանսական արդյունքների մասին առանձին հաշվետվություն, որին հետևում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն) փոխարեն:

#### 2.6 Նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտներ, որոնք կիրառելի են ընթացիկ տարվա համար

Բիզնեսը ընդունել է իր գործունեության համար կիրառելի և արդեն ուժի մեջ մտած նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից: Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ ՀՀՄՍԽ կողմից գործող

ստանդարտների վերաբերյալ թողարկված, սակայն դեռևս չգործող որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ նախօրոք չեն ներդրվել Բիզնեսի կողմից: Որոշ այլ նոր թողարկված ստանդարտներ և մեկնաբանություններ գործում են, սակայն չի ակնկալվում, որ դրանք Բիզնեսի ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան: Բիզնեսի ղեկավարությունը կանխատեսում է, որ ապագա բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Բիզնեսի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ստորև ներկայացված նոր և վերանայված ՖՀՄՄ-ների կիրառման մասով Բիզնեսը վերլուծել է դրանց ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա՝ հիմք ընդունելով հատուկ փաստեր և հանգամանքներ, և կատարել համապատասխան բացահայտումներ:

01.01.2019թ-ից ուժի մեջ մտած՝ ՖՀՄՄ 16 «Վարձակալություն» ստանդարտի ազդեցությունը Բիզնեսի ֆինանսական հաշվետվությունների վրա բերված է սույն հաշվետվությունների Ծանոթագրություններ բաժնի 3.8 կետում: Նույն ամսաթվին ուժի մեջ մտած՝ ՖՀՄՄ 23 «Շահութահարկի հաշվառման մոտեցման անորոշություն» մեկնաբանությունը նշանակալի ազդեցություն չունի Բիզնեսի ֆինանսական հաշվետվությունների վրա: Այդուհանդերձ ՖՀՄՄ 23-ը տրամադրում է ուղեցույց այն բանի վերաբերյալ, թե ինչպես արտացոլել ՀՀՄՄ 12-ի համաձայն հարկերի հաշվառման մեջ անորոշությունների ազդեցությունը, այդ թվում անորոշ հարկային մոտեցումների առանձին դիտարկման հանգամանքը, հարկային մարմինների ստուգումների վերաբերյալ ենթադրությունները, հարկվող շահույթի կամ հարկային վնասի, հարկման բազաների և նմանատիպ ցուցանիշների որոշումը և փաստերի ու հանգամանքների փոփոխություններ ազդեցությունը:

### **Վարձակալության վճարների զիջումներ**

2020թ-ի մայիսի 28-ին ՀՀՄՄԽ-ն թողարկել է COVID-19-ի հետ կապված վարձակալության վճարների զիջումներ՝ ՖՀՄՄ 16 «Վարձակալություն» ստանդարտում փոփոխությունը: Խորհուրդը փոփոխել է ստանդարտը՝ վարձակալներին ազատելով կորոնավիրուսային համավարակի անմիջական հետևանք հանդիսացող վարձակալության վճարների զիջմամբ պայմանավորված վարձակալության վերափոխումների հաշվառման վերաբերյալ ՖՀՄՄ 16-ի ուղեցույցի կիրառումից: Օժանդակությունը նախատեսված չէ վարձատուների համար: Որպես գործնական մոտեցում վարձակալը կարող է ընտրել՝ չզննհատել՝ արդյոք կորոնավիրուսային համավարակով պայմանավորված վարձավճարի զիջումը վարձակալության պայմանագրի վերափոխում է, թե ոչ: Նման ընտրություն իրականացրած վարձակալը հաշվառում է կորոնավիրուսային համավարակի հետևանքով վարձակալության վճարի զիջման հետ կապված ցանկացած փոփոխություն այնպես, ինչպես կհաշվառեր փոփոխությունը համաձայն ՖՀՄՄ 16-ի, եթե այն չլիներ վարձակալության վերափոխում: Այս մոտեցումը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ վարձավճարների զիջումը տեղի է ունենում որպես կորոնավիրուսային համավարակի ուղղակի հետևանք, և եթե բավարարված են ստորև նշված բոլոր պայմանները՝

- վարձակալության վճարների փոփոխությունը հանգեցնում է վարձակալության վերանայված հատուցման, որն ըստ էության նույնն է կամ ավելի ցածր է, քան փոփոխությանը անմիջապես նախորդող վարձակալության հատուցումը.
- վարձակալական վճարների ցանկացած կրճատում ազդում է միայն այն

վարձավճարների վրա, որոնց վճարումները նախատեսված են 2021թ-ի հունիսի 30-ին կամ դրանից շուտ (օրինակ՝ վարձակալության վճարի զիջումը կարող է բավարարել այս պայմանին, եթե այն հանգեցնում է վարձակալության վճարների կրճատման մինչև 2021թ-ի հունիսի 30-ը և վարձակալության վճարների հետագա աճի 2021թ-ի հունիսի 30-ից հետո)։

- **Վարձակալության պայմանագրի այլ դրույթներում և պայմաններում բովանդակային փոփոխություններ տեղի չեն ունեցել:**

Բացառության կիրառումը վարձակալի կողմից թույլատրվում է, բայց չի պարտադրվում:

***Վարձակալության վճարների զիջումների հաշվառումը, որոնք հաշվառված չեն որպես վարձակալության վերափոխումներ***

ՖՀՄՍ 16-ի փոփոխությունը հստակ ուղեցույց չի տալիս այն մասին, թե ինչպես է վարձակալը հաշվառում վարձակալության վճարի զիջումը՝ նկարագրված մոտեցումը կիրառելիս: Նշվում է, որ ընտրություն կատարելիս վարձակալը վարձակալության վճարների ցանկացած փոփոխություն, որն առաջացել է կորոնավիրուսային համավարակի հետ կապված վարձավճարների զիջումից, հաշվառում է նույն կերպ, ինչպես կհաշվառեր փոփոխությունը ՖՀՄՍ 16-ի համաձայն, եթե փոփոխությունը չլիներ վարձակալության վերափոխում: Կան որպես վարձակալության վերափոխում չհաշվառվող վարձակալության վճարի զիջման մի քանի հնարավոր մոտեցումներ, այդ թվում.

1. Վարձակալության վճարների ներման կամ հետաձգման ձևով զիջման հաշվառում՝ որպես բացասական փոփոխական վարձակալության վճար,
2. Վարձակալության վճարների ներման կամ հետաձգման ձևով զիջման հաշվառում՝ որպես պայմանական չափանիշի բավարարում, որը ֆիքսում է նախկին փոփոխական վարձակալության վճարները,
3. Վճարների հետաձգման ձևով զիջման հաշվառում այնպես, կարծես վարձակալությունը փոփոխված չէ:

### 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

#### 3.1 Ներդրումներ ստացացված կազմակերպություններում

Աստացացված կազմակերպություններում ներդրումներից (եթե կան այդպիսիք) շահաբաժինների եկամուտը ճանաչվում է, երբ հաստատվում է Բիզնեսի՝ վճարումներ ստանալու իրավունքը: Նման դեպքերում ճանաչված եկամուտը պետք է ներառվի այլ եկամուտներում:

#### 3.2 Հասույթի ճանաչումը

Ապրանքների վաճառքից հասույթը ճանաչվում է, երբ դրանք ֆիզիկապես հանձնվում են գնորդին իրենց սեփականության իրավունքի փոխանցմամբ:

Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է, երբ դրանց կատարումն իրականացված է, արդյունքները փոխանցված են պատվիրատուին, և կողմերը ստորագրել են դրանց վերաբերյալ փոխադարձ հաշվարկային փաստաթղթերը:

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք իրական արժեքով՝ զուգահեռ գեղչերից և իրացման հետ կապված հարկերից:

Ապրանքի վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է, երբ բավարարվում են հետևյալ պայմանները՝

- Բիզնեսը գնորդին է փոխանցել կատարված աշխատանքների հետ կապված ռիսկերի և փոխհատուցումների մեծ մասը,
- Բիզնեսը չի պահպանում կառավարման այն չափի մասնակցություն, որը բխում է սեփականության իրավունքից,
- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Բիզնես,
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսերը:

#### 3.3 Փոխառության ծախսեր

Փոխառության բոլոր ծախսերը ճանաչվում են այն ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, որի ընթացքում տեղի են ունեցել այդ ծախսերը, եթե դրանք չեն վերագրվում որակավորվող ակտիվներին:

#### 3.4 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը ու արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման կամ կառուցման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք ենթակա չեն վերադարձման, և այդ հիմնական միջոցին ուղղակիորեն վերագրվող այլ ծախսումները:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Եթե կա որևէ հայտանիշ, որ տեղի է ունեցել ակտիվի մաշվածության դրույթաչափի, օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի էական փոփոխություն, ապա տվյալ ակտիվի մաշվածությունը վերանայվում է այնպես, որ ապագայում ճիշտ արտացոլի նոր ակնկալիքները:

Ըստ դասերի՝ հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները 2020 ֆինանսական տարվա համար եղել են.

Շենքեր և շինություններ	-	20 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	5-8 տարի
Տնտեսական և գրասենյակային գույք	-	5-8 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	-	1-5 տարի
Այլ հիմնական միջոցներ	-	1-20 տարի

Հողամասերի նկատմամբ մաշվածություն չի հաշվարկվում:

Հիմնական միջոցի վրա կատարված ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են այդ հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները՝ ներառյալ վերանորոգման ու պահպանման, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում դրանց կատարման ժամանակաշրջանում: Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ վերանորոգման ծախսերը կապիտալացվում են և հիմնական միջոցների կազմում ներկայացվում են առանձին դասով: Դրանց նկատմամբ հաշվարկվում է մաշվածություն, օգտակար ծառայության ժամկետ է հանդիսանում վարձակալության ժամկետը:

### 3.5 Ներդրումային գույք

Ակտիվը՝ հողը կամ շենքը, որը պահվում է սեփականատիրոջ մոտ կամ ֆինանսական վարձակալության դեպքում՝ վարձակալի մոտ, ճանաչվում է որպես ներդրումային գույք՝ վարձակալությունից եկամուտ վաստակելու կամ դրա արժեքի աճի կամ էլ միաժամանակ այդ երկու նպատակներով:

Ներդրումային գույքն առաջացնում է դրամական միջոցների հոսքեր, որոնք մեծապես անկախ են կազմակերպության կողմից պահվող այլ ակտիվներից:

Բիզնեսի ներդրումային գույքը (բացառությամբ այն գույքի, որը համապատասխանում է վաճառքի համար պահվող դասակարգվելու չափանիշին) պետք է չափվի ինքնարժեքով (սկզբնական արժեքով): Գնված ներդրումային գույքի ինքնարժեքը ներառում է դրա գնման գինը և ուղղակիորեն վերագրելի ցանկացած ծախսում:

Ներդրումային գույքի (բացառությամբ այն գույքի, որը համապատասխանում է վաճառքի համար պահվող դասակարգվելու չափանիշին) մաշվածությունը պետք է ճանաչվի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը:

Ներդրումային գույքի օգտակար ծառայության ժամկետը համընկնում է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի հետ:

### 3.6 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները սահմանվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Դրանք ամորտիզացվում են իրենց օգտակար ծառայության ընթացքում: Եթե կա որևէ հայտանիշ, որ տեղի է ունեցել ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի դրույթաչափի, օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի էական փոփոխություն, ապա ամորտիզացիան պետք է վերանայվի այնպես, որ արտացոլի նոր ակնկալիքները:

Ըստ դասերի՝ ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները 2020 ֆինանսական տարվա համար եղել են.

Համակարգչային ծրագրեր	- 10 տարի
Այլ ոչ նյութական ակտիվներ	- 10 տարի

### 3.7 Ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բիզնեսի հիմնական միջոցները, ներդրումային գույքը և ոչ նյութական ակտիվները վերանայվում են՝ պարզելու, թե կա արդյոք որևէ հայտանիշ, որ տվյալ ակտիվները կրել են արժեզրկումից կորուստներ: Եթե առկա է հնարավոր արժեզրկման որևէ հայտանիշ, ապա արժեզրկվող ակտիվի (կամ կից ակտիվների խմբի) փոխհատուցվող գումարը գնահատվում է և համեմատվում հաշվեկշռային արժեքի հետ: Եթե գնահատված փոխհատուցվող գումարն ավելի ցածր է հաշվեկշռային արժեքից, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև գնահատված փոխհատուցվող գումար, իսկ արժեզրկումից կորուստն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Նույն կերպ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պաշարները գնահատվում են՝ պաշարների յուրաքանչյուր հոդվածի (կամ համանման հոդվածների խմբի) հաշվեկշռային արժեքը դրա վաճառքի գնի, հանած համալրման և վաճառքի ծախսումները, հետ համեմատելով: Եթե պաշարների որևէ հոդված (կամ համանման հոդվածների խումբ) արժեզրկվել է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև վաճառքի գին՝ հանած համալրման ու վաճառքի ծախսումները, իսկ արժեզրկումից կորուստն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե արժեզրկումից կորուստը համապատասխանաբար հակադարձվում է, ապա ակտիվի (կամ կից ակտիվների խմբի) հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված, գնահատված արժեքը (պաշարների դեպքում՝ վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները), բայց այնպես, որ ավելացված արժեքը չգերազանցի այն գումարը, որը սահմանված կլիներ, եթե ակտիվի (կից ակտիվների խմբի) արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ նախորդ տարիների համար: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

### 3.8 Վարձակալություններ

Բիզնեսը սկսել է կիրառել ՖՀՄՍ 16 «Վարձակալություններ» ստանդարտը 2019թ-ի հունվարի 1-ից: ՖՀՄՍ 16 ստանդարտի կիրառման մասով օգտագործվել է փոփոխված հետընթաց մոտեցումը, համաձայն որի ստանդարտը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում՝ 2019թ-ի հունվարի 1-ի դրությամբ:

Նախկինում Բիզնեսը պայմանագրի սկզբում որոշում էր, թե արդյոք համաձայնությունը հանդիսանում էր վարձակալության պայմանագիր կամ պարունակում էր վարձակալություն՝ ՖՀՄԿ Մեկնաբանություն 4-ի՝ «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում» համաձայն: ՖՀՄ 16 ստանդարտին անցմամբ պայմանագրի սկզբում Բիզնեսը գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն այն դեպքերում, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման և հսկողության իրավունքը: Որպես վերոնշյալ գնահատման հիմք Բիզնեսը օգտագործում է ՖՀՄ 16 ստանդարտի վարձակալության սահմանումը:

ՖՀՄ 16 ստանդարտին անցնելիս Բիզնեսը օգտվել է գործնական բնույթի պարզեցումից, որը թույլ է տալիս չվերանայել վարձակալության գործարքների բացահայտման համար նախկինում իրականացրած գնահատման արդյունքները: Այդ իսկ պատճառով ՖՀՄ 16 ստանդարտի վարձակալության սահմանումը կիրառվել է միայն այն պայմանագրերի նկատմամբ, որոնք կնքվել կամ փոփոխվել են 2019թ-ի հունվարի 1-ին կամ դրանից հետո:

Նախկինում Բիզնեսը վարձակալությունը դասակարգվում էր որպես ֆինանսական բոլոր այն դեպքերում, երբ փոխանցվում էին վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները: Մնացած բոլոր վարձակալությունները դասակարգվում էին որպես գործառնական վարձակալություն: Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվների նկատմամբ իրավունքները ճանաչվում էին որպես ակտիվներ՝ վարձակալված գույքի իրական արժեքին հավասար գումարով (կամ եթե ավելի ցածր էր, նվազագույն վարձավճարների ներկա արժեքով)՝ վարձակալության սկզբի դրությամբ: Վարձատուի նկատմամբ ունեցած համապատասխան ֆինանսական պարտավորությունը ներառվում էր ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ՝ որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն: Վարձավճարները հավասարապես բաշխվում էին ֆինանսական վճարի և չվճարված պարտավորության նվազեցման միջև այնպես, որ ստացվեր հաստատուն տոկոսադրույք ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի նկատմամբ: Գործառնական վարձակալության շրջանակներում վճարվելիք վարձավճարները հաշվվում էին շահույթում կամ վնասում՝ վարձակալության տևողության նկատմամբ՝ գծային հիմունքով:

ՖՀՄ 16 ստանդարտի պահանջների համաձայն Բիզնեսը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ որպես առանձին հոդված վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ: Վարձակալության պայմանագրերի գծով պարտավորությունների հաշվեկշռային արտացոլումը չափվում է ամորտիզացված արժեքով՝ վարձակալության գծով մնացած վարձավճարների ներկա արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ զեղչված Բիզնեսի կողմից գնահատված լրացուցիչ փոխառության դրույքով՝ 10% (գնահատման հիմքում ընկած են տարբեր արտաքին ֆինանսավորման աղբյուրներից առաջարկվող տոկոսադրույքները՝ կատարելով ճշգրտումներ և միջինացում): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, այն գումարով, որը հավասար է վարձակալության գծով պարտավորությանը՝ ճշգրտված վարձակալության գծով կատարված կանխավճարներով կամ հաշվեգրված վարձավճարներով: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության ժամկետը ընդունելով որպես օգտակար ծառայության ժամկետ:

ՖՀՄՍ 16 ստանդարտով սահմանված գործնական բնույթի պարզեցումներ կիրառելու հնարավորությունը իրացնելով՝ Բիզնեսը չի ճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ այն վարձակալությունների համար, որոնց ժամկետը կազմում է մինչև 12 ամիս, կամ վարձակալության հիմքում ընկած ակտիվը փոքրարժեք է: Այս վարձակալությունների հետ կապված վարձավճարների գծով ծախսերը Բիզնեսը ճանաչում է գծային հիմունքով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

ՖՀՄՍ 16 «Վարձակալություններ» ստանդարտին անցումը նշանակալի ազդեցություն չունի Բիզնեսի ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Բիզնեսի ղեկավարության գնահատմամբ այն չունի վարձակալության իրավունքով օգտագործվող ակտիվներ:

### 3.9 Պաշարներ

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների սկզբնական արժեքը ներառում է պաշարների ձեռքբերման և արտադրման ծախսերը, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին ու գտնվելու վայր հասցնելու հետ կապված ծախսերը: Անավարտ և պատրաստի արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է նաև արտադրական վերադիր ծախսեր:

Իրացման գուտ արժեքը վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման (վերանորոգման) և վաճառքի կազմակերպման համար անհրաժեշտ ծախսումները: Իրացման գուտ արժեքի գնահատումները հիմնվում են պաշարների իրացումից սպասվելիք գումարի՝ գնահատման պահին հասանելի առավել արժանահավատ վկայության վրա: Այդ գնահատումները կատարելիս հաշվի են առնվում այդ ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցած դեպքերի հետ ուղղակիորեն կապված գների կամ ծախսումների տատանումները այնքանով, որքանով նման դեպքերը հաստատում են ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանները:

Յուրաքանչյուր հաջորդող ժամանակաշրջանում կատարվում է իրացման գուտ արժեքի նոր գնահատում: Երբ պաշարների ինքնարժեքի՝ մինչև իրացման գուտ արժեք իջեցման նախկին հանգամանքներն այլևս գոյություն չունեն, կամ երբ տնտեսական իրավիճակի փոփոխության արդյունքում առկա է հստակ վկայություն իրացման գուտ արժեքի բարձրացման վերաբերյալ, իջեցված գումարը հակադարձվում է այնպես, որ նոր հաշվեկշռային արժեքը հանդիսանա ինքնարժեքից և վերանայված իրացման գուտ արժեքից նվազագույնը (այսինքն՝ հակադարձումը սահմանափակված է սկզբնապես իջեցված գումարով):

Բիզնեսը ճշգրտում է պաշարների արժեքը մինչև վերականգնվող արժեք՝ դանդաղ շրջանառելի և վնասված պաշարների համար ստեղծելով «Ապրանքանյութական պաշարների փչացման և հնացման» պահուստ: Զանի որ Բիզնեսը պարբերաբար կատարում է ապրանքանյութական պաշարների պիտանիության գնահատում և հիմնականում չի ունենում դուրսգրման ենթակա ապրանքային արժեքներ, պահուստաֆոնդի իրական գումարը միշտ մոտ է լինում գրոյական ցուցանիշին և էական ազդեցություն չի ունենում Բիզնեսի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Բիզնեսը պաշարների ինքնարժեքը որոշում է՝ կիրառելով «Առաջինը մուտք - առաջինը ելք (ԱՄԱԵ)» բանաձևը: ԱՄԱԵ բանաձևով յուրաքանչյուր ապրանքային հոդվածի իրացման ինքնարժեքը որոշվում է համապատասխան ապրանքանյութական պաշարի հոդվածի ձեռքբերման կամ ներստեղծման հաջորդականությամբ՝ սկսած առաջին գործարքից:

### 3.10 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Բիզնեսը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները՝ բացառությամբ այն ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ ու ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով (շահույթի կամ վնասի միջոցով): Ֆինանսական գործիքի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին սովորաբար գործարքի գինն է (այսինքն՝ վճարված կամ ստացված հատուցման իրական արժեքը): Սակայն, եթե վճարված կամ ստացված հատուցման մի մասը ֆինանսական գործիքի դիմաց չէ, այլ՝ ինչ-որ այլ բանի դիմաց, ապա Բիզնեսը պետք է չափի ֆինանսական գործիքի իրական արժեքը: Օրինակ՝ անտոկոս երկարաժամկետ տրամադրած փոխառության կամ դեբիտորական պարտքի իրական արժեքը կարելի է չափել որպես բոլոր ապագա դրամական մուտքերի ներկա արժեք՝ գեղչված համանման պարտքային վարկանիշով համանման գործիքների (համանման՝ արժույթի, ժամկետի, տոկոսադրույքի տեսակի և այլ գործոնների տեսանկյունից) համար շուկայում գերակշռող տոկոսադրույքով (տոկոսադրույքներով):

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ արտացոլվելով զուտ գումարով միայն այն դեպքում, եթե Բիզնեսն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

#### **Ֆինանսական ակտիվներ**

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- ✓ փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- ✓ ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- ✓ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- ✓ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասները պետք է ճանաչվեն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

հաշվետվությունում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում: Բիզնեսի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություններում: Բիզնեսը իր ոչ ընթացիկ ակտիվները՝ բաժնետոմսերը հաշվառում է անվանական արժեքով: Ընդհանուր առմամբ, Բիզնեսի բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեզրկման գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «Ֆինանսական ծախս» և «Ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

➤ Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած անհավաքագրելիության պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Բիզնեսը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը (365 օրից ավել) ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարն ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի անհավաքագրելիության պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է որպես անհավանական, դուրս են գրվում:

➤ Մնացորդներ դրամարկղում և բանկում

Դրամական միջոցների մնացորդները ներառում են դրամարկղում կանխիկ միջոցներ, ցպահանջ ավանդներ (բանկային հաշիվների մնացորդներ) և դրամական միջոցների համարժեքներ (կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներ, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ):

***Ֆինանսական պարտավորություններ***

Բիզնեսի ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը՝ ներառյալ ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները, որոնք հաշվառվում են իրական արժեքով: Բիզնեսի ֆինանսական պարտավորությունները ներկայացված են ծանոթագրություններում:

➤ Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները

չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այդ արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույթի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը գուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

➤ Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային կրեդիտորական պարտքերը պարտավորություններ են, որոնք հաշվվում են վճարման սովորական պայմաններով և չեն կրում տոկոսներ: Արտարժույթով առևտրային կրեդիտորական պարտքերը վերաձևակերպվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքը: Արտարժույթի փոխարկումից օգուտները կամ վնասները ներառվում են այլ եկամուտներում կամ այլ ծախսերում:

3.11 Մեփական կապիտալ

Բիզնեսի կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.12 Հարկեր

Բիզնեսը հարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

**Ընթացիկ հարկ**

Ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է ժամանակահատվածի հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է «շահույթ մինչև հարկումը» հասկացությունից՝ եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Բիզնեսի ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույթաչափերը:

**Հետաձգված հարկ**

Հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև:

Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների

գծով միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին (բացառությամբ գործարար միավորումների) այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստացվի բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային պարտավորությունները և ակտիվները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Բիզնեսը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

#### **Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր**

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են համապատասխանաբար այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

### **3.13 Պահուստներ**

Պահուստները ճանաչվում են, երբ Բիզնեսը որևէ պարտավորություն է կրում (իրավական կամ փաստացի), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Բիզնեսից կպահանջվի կատարել պարտականությունը և այդ պարտավորության գումարը արժանահավատորեն կարող է չափվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտավորությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերը և անորոշությունները: Եթե պահուստը չափվում է՝ օգտագործելով ներկա պարտավորության մարման համար գնահատված դրամական հոսքերը, ապա դրա հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է այդ դրամական հոսքերի ներկա արժեքը (այն դեպքերում, եթե ժամանակի մեջ դրամի ազդեցությունն էական է):

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ փոխհատուցումը կատացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

Աշխատակիցների չօգտագործված արձակուրդային գումարների չափով ստեղծված պահուստը ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճշգրտման միջոցով:

### 3.14 Արտարժույթ

Արտարժույթով դրամային հողվածները վերահաշվարկվել են ՀՀ դրամով՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի (հետագայում՝ ԿԲ) կողմից սահմանված միջին հաշվարկային փոխարժեքները.

Արտարժույթի տեսակ	31.12.2020թ-ի դրությամբ	31.12.2019թ-ի դրությամբ
1 ԱՄՆ դոլար	522.59 ՀՀ դրամ	479.70 ՀՀ դրամ
1 ԵՎՐՈ	641.11 ՀՀ դրամ	537.26 ՀՀ դրամ
1 ՌԴ ռուբլի	7.02 ՀՀ դրամ	7.77 ՀՀ դրամ

Արտարժույթային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հողվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ որպես այլ եկամուտ կամ ծախս:

### 3.15 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Բիզնեսը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Բիզնեսը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Եթե շահաբաժինները առաջադրվում կամ հայտարարվում են հաշվետու ժամանակաշրջանից հետո, Բիզնեսը չի ճանաչում այդ շահաբաժինները որպես պարտավորություն՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

#### 4. Հիմնական միջոցներ

ՀՀ հազ. դրամներով	Ծեփեր	Սարքավորումներ	Տնտեսական գույք	Տրանսպ. միջոցներ	Հողամասեր	Այլ Հ/Մ	Ընդամենը
<b>Արժեքը</b>							
31 դեկտեմբեր 2019թ.	273,513	605,418	44,667	64,427	57,309	418,008	1,463,342
Ավելացումներ	12,707	26,476	4,726	23,447	-	1,262,405	1,329,761
Պակասեցումներ	-	1,595	-	6,743	-	390,593	398,931
31 դեկտեմբեր 2020թ.	286,220	630,299	49,393	81,131	57,309	1,289,820	2,394,172
<b>Կուտակված մաշվածք</b>							
31 դեկտեմբեր 2019թ.	106,873	561,145	32,052	30,180	-	285,183	1,015,433
Տարվա հատկացումներ	14,893	15,907	3,171	10,090	-	24,102	68,163
Պակասեցումներ	-	-	-	5,687	-	51	5,738
31 դեկտեմբեր 2020թ.	121,766	577,052	35,223	34,583	-	309,234	1,077,858
<b>Հաշվեկշռային արժեք</b>							
31 դեկտեմբեր 2019թ.	166,640	44,273	12,615	34,247	57,309	132,825	447,909
31 դեկտեմբեր 2020թ.	164,454	53,247	14,170	46,548	57,309	980,586	1,316,314

#### 5. Ոչ նյութական ակտիվներ

ՀՀ հազ. դրամներով	Համակարգչային ծրագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
<b>Արժեքը</b>			
31 դեկտեմբեր 2019թ.	1,029	700	1,729
Ավելացումներ	-	-	-
Պակասեցումներ	-	-	-
31 դեկտեմբեր 2020թ.	1,029	700	1,729
<b>Կուտակված մաշվածք</b>			
31 դեկտեմբեր 2019թ.	512	700	1,212
Տարվա հատկացումներ	73	-	73
Պակասեցումներ	-	-	-
31 դեկտեմբեր 2020թ.	585	700	1,285
<b>Հաշվեկշռային արժեք</b>			
31 դեկտեմբեր 2019թ.	517	-	517
31 դեկտեմբեր 2020թ.	444	-	444

## 6. Ներդրումային գույք

ՀՀ հազ. դրամներով	Շենքեր և շինություններ	Հողամասեր	Այլ Ն/Գ	Ընդամենը
<b>Արժեքը</b>				
31 դեկտեմբեր 2019թ.	375,757	32,514	54,008	462,279
Ավելացումներ	31,453	-	2,697	34,150
Պակասեցումներ	-	-	-	-
31 դեկտեմբեր 2020թ.	407,210	32,514	56,705	496,429
<b>Կուտակված մաշվածք</b>				
31 դեկտեմբեր 2019թ.	21,818	-	16,498	38,316
Տարվա հատկացումներ	5,255	-	6,636	11,891
Պակասեցումներ	-	-	-	-
31 դեկտեմբեր 2020թ.	27,073	-	23,134	50,207
<b>Հաշվեկշռային արժեք</b>				
31 դեկտեմբեր 2019թ.	353,939	32,514	37,510	423,963
31 դեկտեմբեր 2020թ.	380,137	32,514	33,571	446,222

## 7. Տրված կանխավճարներ

31.12.2020թ-ի դրությամբ Բիզնեսը ունեցել է 585,716 հազ. դրամին համարժեք՝ 1,120,795 ԱՄՆ դոլարի, տրված կանխավճարներ՝ արտադրական սարքավորումների ձեռքբերման համար: Բիզնեսի ղեկավարության գնահատմամբ կանխավճարը դասակարգվել է՝ որպես ոչ ընթացիկ:

## 8. Հետաձգված հարկային ակտիվներ

31.12.2020թ-ի դրությամբ Բիզնեսը ունեցել է 1,202 հազ. դրամ արժեքով հետաձգված հարկային ակտիվներ: Դրանք առաջացել են աշխատակիցներին վճարվելիք արձակուրդային վճարների և դեբիտորական պարտքերի հնարավոր անհավաքագրելիության պահուստներին կատարված հատկացումների հետևանքով, իֆչպես նաև այլ նվազեցվող ժամանակավոր տարբերություններից:

31.12.2019թ-ի դրությամբ Բիզնեսի հետաձգված հարկային ակտիվների մնացորդը կազմել է 203 հազ. դրամ:

## 9. Ապրանքանյութական պաշարներ

ՀՀ հազ. դրամներով	Հունք և նյութեր	Անավարտ արտադրանք	Պատրաստի արտադրանք	Ապրանքներ	Ընդամենը*
31 դեկտեմբեր 2019թ.	812,695	459,266	819,976	174,886	2,266,823
31 դեկտեմբեր 2020թ.	1,040,164	262,069	818,215	190,287	2,310,735

Բիզնեսը ճշգրտում է պաշարների արժեքը մինչև վերականգնվող արժեք՝ դանդաղ շրջանառելի և վնասված պաշարների համար ստեղծելով «Ապրանքանյութական պաշարների փչացման և հնացման» պահուստ: Քանի որ Բիզնեսը պարբերաբար կատարում է ապրանքանյութական պաշարների պիտանիության գնահատում և հիմնականում չի ունենում դուրսգրման ենթակա ապրանքային արժեքներ, պահուստաֆոնդի իրական գումարը միշտ մոտ է լինում զրոյական ցուցանիշին և էական ազդեցություն չի ունենում Բիզնեսի ֆինանսական հաշվետվությունների վրա:

## 10. Դեբիտորական, կրեդիտորական պարտքեր և կանխավճարներ

### 10.1 Դեբիտորական պարտքեր և տրված կանխավճարներ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վաճառքների գծով*	73,671	99,332
Դեբիտորական պարտքեր բյուջեին	18,955	24,199
Ընդամենը դեբիտորական պարտքեր	92,626	123,531
Տրված կանխավճարներ	243,922	421,364

31.12.2020թ-ի դրությամբ Բիզնեսի առևտրային դեբիտորական պարտքերի մնացորդը գեղչված է դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության պահուստին կատարված մասհանումների զուտ գումարի՝ 3,877 հազ. դրամի չափով, որը, Բիզնեսի ղեկավարության գնահատմամբ կազմել է Բիզնեսի առևտրային դեբիտորական պարտքերի մնացորդի 5% մեծությունը: Բիզնեսի առևտրային դեբիտորական պարտքերի համախառն մնացորդը 31.12.2020 թ-ի դրությամբ կազմել է 77,548 հազ. դրամ:

### 10.2 Կրեդիտորական պարտքեր և ստացված կանխավճարներ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր մատակարարներին	119,723	106,634
Կրեդիտորական պարտքեր բյուջեին	115,565	52,050
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	1,412	-
Կրեդիտորական պարտքեր այլ անձանց	-	323,287
Այլ կրեդիտորական պարտքեր	1,777	786
Ընդամենը	238,477	482,757
Ստացված կանխավճարներ	210,661	151,192

## 11. Դրամական միջոցներ

(ՀՀ հազ. դրամներով)	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>Կանխիկ</b>		
ՀՀ դրամ	414	105
<b>Հաշվարկային հաշիվ</b>		
ՀՀ դրամ	163,417	8,337
Արտարժույթ	357,965	296
<b>Ընդամենը</b>	<b>521,796</b>	<b>8,738</b>

## 12. Այլ ակտիվներ

Բիզնեսի այլ ընթացիկ ակտիվները իրենցից ներկայացնում են Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձանց անունից վճարված և դեռևս չհաշվանցված ավելացված արժեքի հարկի գումարները, որոնց մնացորդը 31.12.2020թ-ի դրությամբ կազմել է 7,942 հազ. դրամ, իսկ 31.12.2019թ-ի դրությամբ՝ 11,408 հազ. դրամ:

## 13. Կանոնադրական կապիտալ

Բիզնեսի կանոնադրական կապիտալը 31.12.2020թ-ի դրությամբ կազմել է 1,000,000 հազ. ՀՀ դրամ, որը կազմված է 10 հազ. ՀՀ դրամ անվանական արժեքով 100,000 հատ բաժնետոմսերից: 31.12.2020թ-ի դրությամբ Բիզնեսի բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված և ամբողջությամբ վճարված են: 31.12.2019թ-ի դրությամբ ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 865,000 հազ. ՀՀ դրամ:  
Տես «Իրավական կարգավիճակը» բաժինը:

## 14. Պահուստային կապիտալ

Բիզնեսը ստեղծել է պահուստային կապիտալ, որի մնացորդը 31.12.2020թ-ի դրությամբ կազմել է 74,500 հազ. դրամ: 31.12.2019թ-ի դրությամբ Բիզնեսի պահուստային կապիտալի մեծությունը կազմել է 54,500 հազ. դրամ, իսկ 2020 թ-ի ընթացքում պահուստային կապիտալին կատարված մասհանումը եղել է 20,000 հազ. դրամ:

## 15. Չուտ ակտիվներ և կապիտալի այլ տարրեր

01.01.2019թ-ի դրությամբ Բիզնեսի չբաշխված շահույթը կազմել է 775,000 հազ. դրամ, իսկ զուտ ակտիվները՝ 1,666,500 հազ. դրամ:

2019թ-ի ֆինանսական տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներով արձանագրվել է շահույթ՝ 178,567 հազ. դրամի չափով, և հայտարարվել է 526,658 հազ. դրամ շահաբաժին, ինչի արդյունքում 31.12.2019թ-ի դրությամբ Բիզնեսի չբաշխված շահույթը կազմել է 398,909 հազ. դրամ, իսկ զուտ ակտիվները՝ 1,318,409 հազ. դրամ:

2020 ֆինանսական տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներով արձանագրվել է շահույթ՝ 453,663 հազ. դրամի չափով, և հայտարարվել է 357,895 հազ. դրամ շահաբաժին, ինչի արդյունքում 31.12.2020թ-ի դրությամբ Բիզնեսի չբաշխված շահույթը կազմել է 474,677 հազ. դրամ, իսկ զուտ ակտիվները՝ 1,549,177 հազ. դրամ:

16. Վարկեր և փոխառություններ \*/\*\*

Երկարաժամկետ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		Տարեկան
	ԱՄՆ դոլար	Հազ. դրամ	ԱՄՆ դոլար	Հազ. դրամ	
«Ինեկորբանկ» ՓԲԸ-ից ստացված 150մլն դրամի առաջին վարկ	-	-	-	64,300	10.00%
«Ինեկորբանկ» ՓԲԸ-ից ստացված 10մլն դրամի վարկ	-	7,296	-	8,107	11.00%
«Ինեկորբանկ» ՓԲԸ-ից ստացված 150մլն դրամի երկրորդ վարկ	-	-	-	6,491	10.00%
«Ինեկորբանկ» ՓԲԸ-ից ստացված 250մլն դրամի վարկ	-	81,046	-	133,258	10.00%
«Ինեկորբանկ» ՓԲԸ-ից ստացված 40,000 ԱՄՆ դոլարի վարկ	4,920	2,505	21,529	9,814	7.00%
«Ինեկորբանկ» ՓԲԸ-ից ստացված 272,000 ԱՄՆ դոլարի վարկ	178,450	81,978	191,884	80,308	9.50%
«Ինեկորբանկ» ՓԲԸ-ից ստացված 45,000 ԱՄՆ դոլարի վարկ	29,952	14,110	44,081	18,650	7.00%
«Ինեկորբանկ» ՓԲԸ-ից ստացված 80,000 ԱՄՆ դոլարի վարկ	53,248	25,085	78,391	33,166	7.00%
«Հայեկոնոմբանկ» ԲԲԸ-ից ստացված 140մլն դրամի սուբսիդավորվող վարկ	-	25,421	-	-	
«Հայեկոնոմբանկ» ԲԲԸ-ից ստացված 160մլն դրամի սուբսիդավորվող վարկ	-	27,779	-	-	6.38%
«Հայեկոնոմբանկ» ԲԲԸ-ից ստացված 200մլն դրամի սուբսիդավորվող վարկ	-	36,666	-	-	5.38%
«Ինեկորբանկ» ՓԲԸ-ից ստացված 39.8մլն դրամի սուբսիդավորվող վարկ	-	29,288	-	-	
«Ինեկորբանկ» ՓԲԸ-ից ստացված 460.2մլն դրամի սուբսիդավորվող վարկ	-	338,346	-	-	
<b>Ընդամենը երկարաժամկետ վարկեր</b>		<b>669,520</b>		<b>354,094</b>	

(Վարկեր և փոխառություններ՝  
շարունակություն)

Կարճաժամկետ

	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		Տարեկան
	ԱՄՆ դոլար	Հազ. դրամ	ԱՄՆ դոլար	Հազ. դրամ	
«Ինեկոբանկ» ՓԲԸ-ից ստացված 228մլն դրամի վարկ	-	-	-	26,481	10.00%
«Ինեկոբանկ» ՓԲԸ-ից ստացված 661,000 ԱՄՆ դոլարի վարկ	-	-	78,482	37,648	7.00%
«Ինեկոբանկ» ՓԲԸ-ից ստացված 200,000 ԱՄՆ դոլարի վարկ	-	-	34,317	16,461	7.00%
«Ինեկոբանկ» ՓԲԸ-ից ստացված 50մլն դրամի առաջին վարկ	-	-	-	10,351	10.00%
«Ինեկոբանկ» ՓԲԸ-ից ստացված 50մլն դրամի երկրորդ վարկ	-	-	-	10,351	10.00%
«Ինեկոբանկ» ՓԲԸ-ից ստացված 70մլն դրամի վարկ	-	-	-	14,466	10.00%
«Ինեկոբանկ» ՓԲԸ-ից ստացված 150մլն դրամի առաջին վարկ	-	-	-	36,584	10.00%
«Ինեկոբանկ» ՓԲԸ-ից ստացված 10մլն դրամի վարկ	-	917	-	828	11.00%
«Ինեկոբանկ» ՓԲԸ-ից ստացված 150մլն դրամի երկրորդ վարկ	-	-	-	55,756	10.00%
«Ինեկոբանկ» ՓԲԸ-ից ստացված 250մլն դրամի վարկ	-	53,839	-	53,754	10.00%
«Ինեկոբանկ» ՓԲԸ-ից ստացված 40,000 ԱՄՆ դոլարի վարկ	13,838	7,231	11,293	5,417	7.00%
«Ինեկոբանկ» ՓԲԸ-ից ստացված 272,000 ԱՄՆ դոլարի վարկ	57,174	29,879	24,666	11,833	9.50%
«Ինեկոբանկ» ՓԲԸ-ից ստացված 45,000 ԱՄՆ դոլարի վարկ	9,048	4,729	6,182	2,966	7.00%
«Ինեկոբանկ» ՓԲԸ-ից ստացված 80,000 ԱՄՆ դոլարի վարկ	16,086	8,406	10,942	5,249	7.00%
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ից ստացված 140մլն դրամի սուբսիդավորվող վարկ	-	69,103	-	-	-
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ից ստացված 160մլն դրամի սուբսիդավորվող վարկ	-	78,888	-	-	6.38%
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ից ստացված 200մլն դրամի սուբսիդավորվող վարկ	-	105,356	-	-	5.38%
«Ինեկոբանկ» ՓԲԸ-ից ստացված 39.8մլն դրամի սուբսիդավորվող վարկ	-	10,512	-	-	-
«Ինեկոբանկ» ՓԲԸ-ից ստացված 460.2մլն դրամի սուբսիդավորվող վարկ	-	121,854	-	-	-
«Ինեկոբանկ» ՓԲԸ-ից ստացված 50,000 ԱՄՆ դոլարի առաջին վարկային գիծ	122	64	138	66	7.00%
«Ինեկոբանկ» ՓԲԸ-ից ստացված 150մլն դրամի վարկային գիծ	-	162	-	164	10.00%
«Ինեկոբանկ» ՓԲԸ-ից ստացված 50,000 ԱՄՆ դոլարի երկրորդ վարկային գիծ	182	95	58	28	7.00%
Կարճաժամկետ փոխառություն՝ Դավիթ Հակոբջանյան	-	1,013,827	-	567,377	9.00%
Կարճաժամկետ փոխառություն՝ Նորիկ Հակոբջանյան	-	1,351,422	-	541,097	9.00%
<b>Ընդամենը կարճաժամկետ վարկեր և փոխառություններ</b>		<b>2,856,284</b>		<b>1,396,877</b>	

(Վարկեր և փոխառություններ՝ շարունակություն)

\* ԱՄՆ դոլարով վերցված վարկերը նույն տողում արտահայտված են ՀՀ դրամով՝ ՀՀ Կենտրոնական Բանկի միջին հաշվարկային փոխարժեքով:

\*\*Վարկերի և փոխառությունների տարևերջյան տոկոսների մասով, որոնք դեկտեմբերի 31-ի դրությամբ դեռ վճարված չեն եղել, Բիզնեսը հաշվեգրել է դրանք, քանի որ կրում է դրանց պարտավորությունը: Հաշվեգրված տոկոսները 31.12.2020 թ-ին փոխառությունների մասով կազմել են 15,999 հազ. դրամ, իսկ վարկերի մասով՝ 1,881 հազ. դրամ: Ընդամենը գալիք չկրած տոկոսային ծախսերը ըստ Բիզնեսի վարկային պայմանագրերի 31.12.2020 թ-ի դրությամբ կազմում են 59,921 հազ. դրամ:

## 17. Պահուստներ

31.12.2020թ-ի դրությամբ Բիզնեսը կատարել է 2,800 հազ. դրամ զուտ հատկացում Բիզնեսի աշխատակիցների չօգտագործված արձակուրդային վճարների պահուստին: Պահուստին հատկացումները և դրանց պակասեցումները արտացոլվում են Բիզնեսի համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության մեջ՝ որպես այլ ծախսեր կամ այլ եկամուտներ: 31.12.2019թ-ի դրությամբ պահուստաֆոնդի մեծությունը կազմել է 1,127 հազ. դրամ:

## 18. Հասույթ և վաճառքի ինքնարժեք

Բիզնեսը զբաղվում է մետաղական խողովակների, պրոֆիլների և մետաղական ծունկերի արտադրությամբ, մանրամեծածախ վաճառքով (այդ թվում արտահանման միջոցով) և համանման ապրանքատեսակների առևտրով: 2020թ-ին Բիզնեսի իրացման ընդհանուր շրջանառությունը կազմել է 4,560,965 հազ. դրամ, իսկ 2019թ-ին՝ 4,344,491 հազ. դրամ: Վաճառված արտադրանքի և ապրանքների ինքնարժեքը 2020թ-ին կազմել է 3,813,611 հազ. դրամ, իսկ 2019թ-ին՝ 3,882,620 հազ. դրամ:

## 19. Այլ եկամուտներ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	<u>2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>	<u>2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>
Խոտանի և ջարդոնի իրացումից եկամուտներ	8,693	16,078
Այլ պաշարների վաճառքից եկամուտներ	45,482	2,795
Գործառնական վարձակալությունից եկամուտներ	18,667	16,909
Տոկոսային եկամուտներ	1,254	290
Նյութական վնասի փոխհատուցում	-	20,959
Հիմնական միջոցների օտարումից եկամուտներ	1,250	-
Կրեդիտորական պարտքի դուրսգրում	642	-
Բեռնափոխադրման և թիթեղի կտրման ծառայություններ	3,169	-
Արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից եկամուտներ	263,873	62,917
Այլ եկամուտներ	33,595	1,670
<b>Ընդամենը</b>	<b>376,625</b>	<b>121,618</b>

## 20. Իրացման ծախսեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	<u>2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>	<u>2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>
Հատուցումներ աշխատակիցներին	14,514	15,414
Հիմնական միջոցների մաշվածք	11,832	7,193
Տրանսպորտային ծախսեր	19,751	-
Մարկետինգ և գովազդ	2,731	3,306
Այլ ծախսեր	7,617	22,102
<b>Ընդամենը</b>	<b>56,445</b>	<b>48,015</b>

## 21. Վարչական ծախսեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	56,917	43,933
Հիմնական միջոցների մաշվածք ու սպասարկման ծախսեր	10,220	8,047
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	3,975	5,726
Փոստի ու հեռահաղորդակցման ծախսեր	2,514	1,684
Գրասենյակային ու տնտեսական ծախսեր	3,777	4,138
Խորհրդատվական ծախսեր	394	-
Բանկային ծախսեր և ապահովագրություն	23,060	13,221
Չփոխհատուցվող հարկեր	1,365	936
Այլ ծախսեր	30,248	15,224
<b>Ընդամենը</b>	<b>132,470</b>	<b>92,909</b>

## 22. Այլ ծախսեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Այլ պաշարների օտարման ինքնարժեք	32,089	1,376
Գործառնական վարձակալությամբ հանձնված ներդրումային գույքի սպասարկման ծախսեր	18,154	10,914
Նյութական արժեքների կորուստներ	-	20,959
Անհատույց տրված ակտիվներ	8,660	3,974
Հիմնական միջոցների օտարման ինքնարժեք	1,056	-
Հատկացումներ դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության պահուստին	3,877	-
Արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից ծախսեր	138,351	35,650
Այլ ծախսեր	334	23
<b>Ընդամենը</b>	<b>202,521</b>	<b>72,896</b>

## 23. Ֆինանսական ծախսեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վարկերի և փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ	205,900	153,492
<b>Ընդամենը</b>	<b>205,900</b>	<b>153,492</b>

**24. Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)**

2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների շահութահարկի գծով ծախսի հիմնական տարրերն են.

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	73,979	37,652
Հետաձգված հարկ	(999)	(42)
<b>Ֆին. արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված շահութահարկի գծով ծախս</b>	<b>72,980</b>	<b>37,610</b>

2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների շահութահարկի գծով ծախսի և ՀՀ-ում գործող հարկային դրույքաչափով բազմապատկված «Շահույթ նախքան հարկումը» ցուցանիշի միջև համեմատությունը ներկայացված է ստորև.

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<b>Շահույթ նախքան հարկումը</b>	<b>526,643</b>	<b>216,177</b>
ՀՀ-ում սահմանված շահութահարկի դրույքաչափի 18% (20%)	94,796	43,235
Չնվազեցվող ծախսերի (չհարկվող եկամուտների) 18% (20%)	(20,817)	(5,583)
<b>Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)</b>	<b>73,979</b>	<b>37,652</b>

**25. Հարկեր և այլ պարտադիր վճարներ**

**2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի, հազար դրամ**

	Տարվա սկզբին		Շրջանառություն		Տարվա վերջին	
	Գերավճար	Ապառք	Վճարված	Հաշվարկված	Գերավճար	Ապառք
Հարկերի միասնական հաշիվ <sup>1</sup>	-	-	718,263	717,645	618	-
Շահութահարկ	9,228	-	22,591	83,207	-	51,388
Եկամտային հարկ	-	3,863	70,379	72,061	-	5,545
ԱԱՀ	14,697	-	1,171,177	1,168,613	17,261	-
Ներմուծման ակցիզային հարկ	-	-	10,226	9,500	726	-
Գույքահարկ	11	-	615	943	-	317
Հողի հարկ	1	-	75	85	-	9
Բնապահպանական վճարներ	1	19	360	379	1	38
Սոցալ վճար	-	139	1,936	2,017	-	220
Դրոշմանիշային վճար	-	56	861	860	-	55
Մաքսատուրք	6	-	-	-	6	-
Մաքսավճար	255	-	2,285	2,197	343	-
ԵՏՄ ԱԱՀ	-	47,973	392,706	402,723	-	57,990
Այլ պարտադիր վճարներ	-	-	193	196	-	3
<b>Ընդամենը</b>	<b>24,199</b>	<b>52,050</b>	<b>2,391,667</b>	<b>2,460,426</b>	<b>18,955</b>	<b>115,565</b>

<sup>1</sup> ՀՀ հարկային օրենսդրության համաձայն հարկերի վճարման և հարկային պարտավորությունների հաշվառման համար ստեղծվել է մեկ միասնական հաշիվ, որին էլ Բիզնեսը 2019 և 2020 թթ. կատարվել է իր հարկային վճարումները, բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին կատարվող հարկերի և այլ պարտադիր վճարների:

## 26. Կապակցված կողմերի բացահայտում

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» ստանդարտի, կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին, կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բիզնեսի կապակցված կողմերն են՝ բաժնետերը, ղեկավարության անդամները, ինչպես նաև նրանց հետ կապված անձինք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

31.12.2020 թ-ի դրությամբ Բիզնեսը ստացված փոխառություն է ունեցել իր միակ բաժնետեր Դավիթ Հակոբջանյանից՝ 1,013,827 հազ. դրամի չափով: 31.12.2019 թ-ն դրությամբ փոխառության մնացորդը կազմել է 567,377 հազ. դրամ: 2020 թ-ին փոխառության գծով հաշվարկված տոկոսը կազմել է 67,172 հազ. դրամ:

31.12.2020 թ-ի դրությամբ Բիզնեսը ստացված փոխառություն է ունեցել իր տնօրեն Նորիկ Հակոբջանյանից՝ 1,351,422 հազ. դրամի չափով: 31.12.2019 թ-ն դրությամբ փոխառության մնացորդը կազմել է 541,097 հազ. դրամ: 2020 թ-ին փոխառության գծով հաշվարկված տոկոսը կազմել է 88,289 հազ. դրամ: 2020 թ-ին Բիզնեսի տնօրեն Ն. Հակոբջանյանի տարեկան աշխատավարձը կազմել է 11,315 հազ. դրամ:

Բացահայտում՝ փոխառությունների արժեքը ներառում է հաշվեգրված, բայց չվճարված տոկոսները:

## 27. Պայմանական պարտավորություններ և այլ

### 27.1 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Տնտեսական անբարենպաստ պայմանները և ներդրումների ցածր մակարդակը բացատրվում են 2020թ-ին Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած ռազմական բախումներով և դրանց հաջորդած հրադաքարի ռեժիմի պայմաններով, ներքաղաքական անկայուն վիճակով և իհարկե նույն տարում ամբողջ աշխարհը պառալիզացրած COVID-19 համավարակով՝ պետությունների կառավարությունների կողմից սահմանված կրկնակի արգելափակումներով:

Պետք է ավելացնել նաև՝ որպես զարգացող շուկա Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայրը և համապատասխան ենթակառուցվածքները, որոնք գործում են ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Հայաստանի տնտեսության առանձնահատկություններից են՝ բիզնեսի ոլորտում ու տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալի համեմատաբար փոքրածավալ ներգրավվածությունը, ինչպես նաև Հայաստանի տնտեսության մեկուսացված լինելը համաշխարհային տնտեսության համապատասխան սեկտորներից:

2020թ-ի ընթացքում կորոնավիրուսի և նրա կանխարգելիչ միջոցառումների ազդեցությունները սահմանափակել են գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և դրա հետևանքով ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված և հաշվառված ցուցանիշներին: Իհարկե պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ այս խնդիրը շարունակվում է և մնում է օրակարգային 2021թ-ին:

Այս հաշվետվությունները օգտագործողները պետք է իրենց դատողություններն անեն հաշվի առնելով դրանց պատրասման օրվա և այդ օրվան հաջորդող իրադարձությունները՝ կորոնավիրուսի և նրա կանխարգելիչ միջոցառումների ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների ցուցանիշների վրա, եթե կլինեն այդպիսիք, որոնք կարող են անհրաժեշտ համարվել: Մասնավորապես այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են.

- ակնկալվող պարտքային կորուստների գնահատումը,
- արժեզրկման հետևանքով ակտիվների փոխհատուցվող գումարների գնահատումը,
- փոխառության ծախսումների կապիտալացումը,
- հասույթի գնահատման վերանայումը, անավարտ պայմանագրերի մասով ակտիվների արժեզրկումը,
- վարձակալության ժամկետների գնահատումը:

Ներկա պահին Հայաստանում տնտեսական դժվարությունների բացասական արտահայտման ձևերից են՝ ներդրումների ցածր մակարդակը, ֆինանսական միջոցների արտահոսքը, նվազ եկամուտը, արտաքին ֆինանսական կառույցների միջոցների նվազումը և Սփյուռքից դրամական միջոցների ներհոսքի կրճատումը:

2020 թ-ին Բիզնեսը ունեցել է բավարար շրջանառու միջոցներ՝ ի հաշիվ սեփական և փոխառու միջոցների:

## 27.2 Համավարակի ազդեցությունը

2020 թ-ի մարտի 11-ին Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը (ԱՀԿ) հայտարարեց, որ կորոնավիրուսի տարածումը կարող է բնութագրվել որպես համավարակ:

Վիրուսը զգալի ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության վրա: Կազմակերպություններն առնչվեցին կորցրած եկամուտների և խափանված մատակարարման շղթաների խնդիրների հետ: Չնայած նրան, որ որոշ երկրներ փորձեցին մեղմացնել սահմանափակումները՝ մեղմացումները աստիճանական են եղել, և կազմակերպությունների գործունեության ընդհատման արդյունքում միլիոնավոր աշխատակիցներ կորցրեցին իրենց աշխատանքը: Համավարակը զգալի անկայունության հանգեցրեց ամբողջ աշխարհի ֆինանսական և ապրանքային շուկաներում: Տարբեր երկրների կառավարություններ ձեռնարկեցին միջոցառումներ՝ տնտեսության տուժած ճյուղերին և կազմակերպություններին ֆինանսական և ոչ ֆինանսական օժանդակություն ցուցաբերելու համար:

Տնտեսական արգելափակումն ազդել է նաև կազմակերպությունների վարձակալության պայմանագրերի վրա: Հայաստանում կորոնավիրուսի տարածման պահից ի վեր ՀՀ Կառավարությունը ներկայացրել է COVID-19-ի հետևանքների չեզոքացման երկու տասնյակից ավել ծրագրեր, որոնցից մի մասն ուղղված են վիրուսի սոցիալական ազդեցության դեմ պայքարին, իսկ մնացած ծրագրերը՝ վիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացմանը:

### 27.3 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Բիզնեսը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Եզնաժամի հետևանքով այս ռիսկը խիստ աճել է: Կորուստներից խուսափելու նպատակով Բիզնեսն ընդունել է քաղաքականություն, որի համաձայն արտադրանքի առաքումներ է կատարում մեծամասամբ վճարումները հավաքագրելուց հետո, իսկ մեծ պատվերներն ընդունվում են միայն պատվիրատուներից կանխավճարի ստացման դեպքում:

### 27.4 Կապիտալի ռիսկի կառավարում

Բիզնեսի սեփական կապիտալը կազմված է կանոնադրական կապիտալից, պահուստային կապիտալից և չբաշխված շահույթից: Բիզնեսն իր կապիտալը կառավարում է այնպես, որ ապահովի իր գործունեության անընդհատությունը՝ առավելագույնին հասցնելով բաժնետերերի օգուտը, այդ թվում օգտագործելով վարկային միջոցները:

### 27.5 Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում իրական արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց ամորտիզացված արժեքին:

Այլ դեպքերում իրական արժեքը որոշվում է՝ վկայակոչելով շուկայական արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ կամ զեղչելով համապատասխան դրամական միջոցների հոսքերը՝ օգտագործելով նմանատիպ գործիքների գծով շուկայական տոկոսադրույք: Ղեկավարության համոզմամբ, ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը համապատասխանում է դրանց հաշվեկշռային արժեքին:

### 27.6. Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում: Սա է պատճառը, որ Բիզնեսն ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Բիզնեսն ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Բացառություն են կազմում սեփականատերերի կողմից ավտոմեքենաների պարտադիր ապահովագրությունները, որոնք հատուցում են վթարի դեպքում երկրորդ կողմին (կողմերին) պատճառված վնասները:

